Концерт N 3, как и все остальные скрипичные концерты Айрапетяна, монологичного характера. Вследствие этого в корне меняется взаимоотношение солиста и оркестра. Оркестр и солист выступают в тесном единстве, принимая активное участие в формировании образов. Они становятся равноправными участниками концертной игры. Чередование solo и tutti свидетельствует об определенной связи с концертами барочного типа.

Исходя из художественного содержания, партия солирующего инструмента повествовательно-монологического склада. Даже каденция в контексте концерта становится своего рода "лирической исповедью" героя в противовес традиционному виртуозному разделу.

С точки зрения рассматриваемого жанра Концерт N 3 для

скрипки и камерного оркестра имеет особое значение в творческой эволюции композитора. Сложившиеся в нем тенденции (глубина и цельность композиционного замысла, драматургии, методов формообразования, музыкального языка) определили характерные черты стиля Айрапетяна, ставшие основополагающими в трактовке последующих скрипичных концертов композитора.

Квинтэссенцией всех художественных поисков и находок в творчестве композитора в контексте жанра явился Концерт N 6 для скрипки и камерного оркестра (1995).

Философская концепция произведения заключается в идее: человек и судьба. Однако здесь отсутствует конфликт между личностью и окружающей действительностью, и соответственно, нет резкого противопоставления "человек и мир" (Э.Айрапетян).

Идея Концерта - проникновение в глубокие пласты внутреннего мира героя. По своей же художественной направленности - это глубоко драматичный монолог медитативного характера. Путь, выбранный героем, становится символом, строящим все произведение: пульсирующие остинатные басы создают образ бесконечно текущего времени. Концерт представляет собой одночастную композицию, распадающуюся на несколько разделов, имеющих арочные связи. Все разделы имеют характерный круг образов, вступая тем самым во внутреннее противоборство противоположных сфер, на чем и строится драматургия произведения.

Первый раздел - лирико-психологического характера, в котором раскрывается сложный внутренний мир индивидуума. Второй имеет жанровую направленность. Третий через образы хоральной традиции уводит в возвышенные, неземные сферы.

Тематизм концерта отличается мотивностью структуры, речитативно - декламационным характером. Ладовая основа, которая определяет интонационный строй Концерта, вращается вокруг трехзвучия C dur - c moll с главенствующим центром E (Es). В письме композитора часто используется линейность, гетерофония.

В Концерте, исключаящем традиционную концертность, скрипка и оркестр выступают в неразрывной связи, в которой монолог солирующего инструмента лишь поддерживается оркестром, иначе говоря, концертная виртуозность здесь буквально сводится к минимуму. Оркестр "является лишь аккомпанементом, подчеркивающим долгий монолог солиста"².

Рассматриваемое произведение - глубоко личностного характера, в котором отразились мысли и чувства композитора, взирающего на жизнь с философской позиции. Думается, что среди всех Концертов для скрипки с оркестром Э. Айрапетяна Концерт N 6 - вершина в творческой биографии композитора.

Таким образом, благодаря своеобразию художественно-образного содержания, смелым исканиям в области драматургии, формообразования, музыкального языка, концерты Э. Айрапетяна внесли значительный вклад в развитие жанра армянского скрипичного концерта.

² С. Саркисян. Ностальгический романтизм Э. Айрапетяна // Вопросы теории и эстетики армянского музыкального творчества. Ереван, 1999, с. 117.

ՍՅՈՒՐՈՒԵԱԼԻՉՄԻ ՏԱՐՐԵՐՆ ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍՏՈՒՄ

«...նկարիչը հասուն է դառնում այն ժամանակ,
երբ մաքրության և տանջանքի բախումների
ծնվում է հասունությունը»:

ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ

Ոստանիկ Ադոյանը (1904-1948) ծնվել է Վան նահանգի Հայոց ձոր գավառի Խորգոմ գյուղում 1904-ի ապրիլի 15-ին: Նախնական կրթությունը ստացել է Խորգոմի սբ. Վարդանի Հայոց առաքելական դպրոցում, ապա 1910-ից Վանի Հյուսիսային Հայոց առաքելական դպրոցում, Այգեաստանում հաճախել է ամերիկյան միսիոներական դպրոց: 1915-ին թուրքերի կազմակերպած կոտորածներից փրկվելու համար Ոստանիկը մոր և չորս քույրերի հետ (Հայրը մինչ այդ թուրքական բանակ զորակոչվելուց խուսափելու համար տեղափոխվել էր ԱՄՆ) բռնում է գաղթի ճամփան՝ Իզդեր, էջմիածին, Երևան: Երևանում Ոստանիկը հաճախում է արական թեմական դպրոց, աշխատում որպես հյուսն, քանդակազարդող և զբաղար: 1919-ին որդու ձեռքերում մահանում է մայրը, ինչն անջնջելի հետք է թողնում Գորկու հետագա ճակատագրի վրա:

1920-ին Ոստանիկ Ադոյանը քրոջ՝ Վարդուշի հետ տեղափոխվում է ԱՄՆ: Այստեղ նա շարունակում է ուսումը, նախ՝ Փրովիդանսի «Բարձրագույն տեխնիկական դպրոցում», 1922-24-ին՝ Բոսթոնի դիզայնի նոր դպրոցում, 1926-31-ին՝ Նյու Յորքի «Բարձրագույն արվեստի կենտրոնական դպրոցում»: 1925-ին Ոստանիկ Ադոյանը վերցնում է Արշիլ Գորկի անուն-ազգանունը:

1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ. Գորկու գործերը բնութագրվում են գեղարվեստական փնտրտուքի շրջանով. մի շրջան, երբ Գորկին ներշնչված էր նախ Սեզանի, ապա Պիկասոյի և կուբիստների աշխատանքներով: Սակայն նույնիսկ այս վաղ աշխատանքներում Գորկին խուսափում է կրկնօրինակումներից, ստեղծում թեև այլ նկարիչներից ազդված, բայց իր սեփական գործերը: «Նույնիսկ երբ նա փորձում էր նկարել Պիկասո կամ Բրաք,

արդյունքը մաքուր Գորկի էր»¹: 1930-ական թթ. կեսերին պատկանող Նուվարք օգանավակայանի որմնանկարները ևս, թեև կրում են Լեժեի ազդեցությունը, միաժամանակ արտահայտում են Գորկու ուրույն մտածելակերպը: 1930-ական թթ. վերջին և 1940-ական թթ. սկզբին Գորկու գործերում նկատելի է Մասոնի և Միրոյի ազդեցությունը: Վերջապես, 1940-ական թթ. կեսերը նշանավորվում են Գորկու ստեղծագործական հասունությունամբ: Այս տարիներին է (սկսած 1943-44-ից), որ Գորկու արվեստը ձեռք է բերում իր վերջնական դիմագիծը (իհարկե, արդյո՞ք դա կմնար որպես վերջնական, եթե Գորկու կյանքն այդքան կարճ չլիներ): Հենց այս շրջանի գործերն են, որ հետագայում թույլ կտան Գորկու քրոջ որդուն՝ Կառլեն Մուրադյանին, գրել. «Կորքիին խորունկ ազդեցությունը արուեստին վրայ պատճառ եղավ որ ինքը հռչակուհի հայրը վերացական արտայայտապաշտութեան, կենսա-ձեւային գեղարվեստութեան՝ Նոր Ամերիկայի դպրոցին եւ միջազգային դպրոցին»²: Եվ այս հասուն շրջանի գործերում Գորկին ավելի շատ մոտենում է սյուրռեալիզմին: Չմոռանանք, որ Երկրորդ համաշխարհայինի տարիներին հենց ԱՄՆ-ն էր դարձել սյուրռեալիստների կենտրոնը: Այստեղ էին Իվ Տանգին, Մաքս էռնստը, Մաթթան, ինչպես նաև սյուրռեալիզմի «հայրը»՝ Անդրե Բրետոնը: Վերջինիս հետ Գորկին հանդիպում է 1944-ին և ընկերանում: Նրանք միասին նույնիսկ վերնագրեր են ընտրում Գորկու նկարների համար: Սակայն ասել, որ Գորկու արվեստում սյուրռեալիզմի դրսևորումը լոկ վերոհիշյալ արվեստագետների հետ շփման արդյունք է, սխալ կլինի:

Գորկին դեռ իր վաղ գործերում ունի սյուրռեալիստական տարրեր, որոնք նա շարունակում է զարգացնել իր սեփական աշխարհայացքի համաձայն: Այս մասին նշում է նաև Գորկու մտերիմ ընկեր, ամերիկյան հայտնի նկարիչ Վիլհեմ դե Բունինգը. «Նա ուներ այդ բոլոր տարրերը մինչև սյուրռեալիստները, և սյուրռեալիստները նրան ասեցին, որ ինքն արդեն դրանք ունի»³: Գորկու արվեստում սյուրռեալիզմի առաջին դրսևորումներից է «Նատյուրմորտ ձիով» նկարը (1928), որտեղ տեսնում ենք իրար հետ կապ չունեցող առարկաները մի հարթություն վրա միավոր-

¹ Julien Levy, Arshile Gorky, New York, 1966, p. 16.

² A Calendar commemorating the genius of Arshile Gorky on the 85th anniversary of his birth, New York, 1989.

³ Jim M. Jordan and Robert Goldwater, The paintings of Arshile Gorky, New York, 1982, p. 27.

րելու ձգտումը: Առարկաները կոնտեքստից դուրս և միաժամանակ վերացական ձևով ներկայացնելու միտումն ակնհայտ է «Գիշեր, առեղծված և կարոտախտ» նկարաշարում (վաղ 1930-ական թթ.): Ապա, Նուվարքի օգանավակայանի որմնանկարները Գորկին կառուցում է միկրոկոսմիկ ու մակրոկոսմիկ տարրերի համադրությամբ՝ կարծես մատնանշելով սյուրռեալիստների այն գաղափարը, որ նույնիսկ տիեզերական մարմիններն իրենց սկզբնաձևերն ունեն աշխարհի ամենափոքր օրգանիզմներում: Այս մոտեցումը նկատելի է նաև Տանգիի և Միրոյի արվեստում: Հայրենի խորգոմին նվիրված նկարաշարում (1936-40) Գորկու արվեստը նոր բարձունքի է հասնում: Նկարաշարը հիմնականում կարելի է բնութագրել որպես կենսաձևային սյուրռեալիզմի օրինակ: Այստեղ Գորկին դեռ չի գնում ձևերի լրիվ արատահաման:

«Պարտեզ Սոչիում» նկարաշարը (1941-43) թե՛ թեմատիկ, թե՛ ոճական առումով խորգոմին նվիրված շարքի շարունակությունն է և պահպանում է նախորդ տարիների գեղանկարչական մոտեցումները: Սակայն 1942-43 թթ. նոր փնտրտուքների շրջան են: Այս ժամանակ Գորկին մեծապես տարվում է Կանդինսկու գեղարվեստական հայացքներով, ծանոթանում երիտասարդ նկարիչ Ռոբերտո Մաթթային, ինչը ևս ազդեցություն է թողնում նրա արվեստում: 1943-ին ստեղծված «Ջրվեժ» գործում (երկու տարբերակով), որում արվեստաբանները հակված են տեսնել Կանդինսկու ազդեցությունը, նախանշվում են նկարչի ստեղծագործական վերջին չորս տարիների գլուխգործոցների հիմնական գծերը: Դրանք առավել հստակվում են նույն 1943-ի «Անատոմիական գրատախտակ», «Բնանկար Վիրջինիայում» գործերում:

Ինչպես արդեն նշվեց, 1944-ին Գորկին ծանոթանում է Բրետտին, և հենց այդ տարում մեկը մյուսի հետևից ստեղծվում են Գորկու լավագույն գործերը: «Ծաղկալից ջրաղացի ջուրը», «Լյարդը աքաղաղի կատարն է», «Ինչպես է մորս ասեղնագործ գոգնոցը բացվում իմ կյանքում», «Ծիրանների բուրմունքը», «Միամյա իշակաթնուկ» կտավները հիրավի համարվում են Գորկու արվեստի բարձրակետերը: Բրետտին ասում է. ««Լյարդը աքաղաղի կատարն է» կտավը... կարելի է համարել ամենալայն բացված դուռը դեպի համամասնությունների աշխարհ: Դյուրին լուծումների սիրահարներն այստեղ ոչինչ չեն ստանա. հակառակ ամեն զգուշացման, նրանք համառորեն կուզենան այդ հորինվածքներում հայտնաբերել նատյուրմորտ, բնանկար և ֆիգուր՝ չհամաձայնելով կանգնել հիբրիդային ձևերին դեմ հանդիման, որոնց

մեջ է ձգտում հայտնվել մարդկային ամեն հույզ»⁴: 1945-ին ստեղծված «Գայթակղիչի օրագիրը» Գորկու մյուս գործերից առանձնանում է իր մուգ գունաշարով՝ մոխրագույնի գերակշռությամբ: Ահա թե ինչ է գրում Հ. Ռոզենբերգն այս գործի մասին. ««Գայթակղիչի օրագիրը»... իմ կարծիքով Գորկու գլուխգործոցն է: Այն կատարելապես միավորում է Գորկու արվեստի հանգուցալուծումները հանդիսացող տասնյակ նկարների երեք որակները՝ էսթետիկ ակնարկ, տեխնիկական վիրտուոզություն, զգայական բովանդակություն»⁵: Սակայն հիմնականում սյուրռեալիզմի կամ էքսպրեսիոնիզմի արգասիքը համարվող այս գործերը չեն սահմանափակվում այդ ուղղություններից ոչ մեկով: Զուր չէր Գորկին քամահարանքով արտահայտվում սյուրռեալիզմի մասին. «Սյուրռեալիզմը հակաէսթետիկական, կատարելությունը կասկածի ենթարկող, ժամանակակից արվեստին հակադրվող, դիմակի տակ թաքնված ակադեմիական արվեստ է: Ազատագրման նրա պնդումը հիրավի սահմանափակ է ներքին կաղապարվածություն պատճառով: Սյուրռեալիզմի հետևորդների համար արվեստի ավանդույթն ու որակը գրեթե ոչինչ չարժեն: Նրանք հարբած են հոգեկան ինքնաբերականությունում ու անբացատրելի երազներով: ...Իրականում նրանք այնքան անկեղծ չեն նկարչություն մեջ, որքան ես կուզեի, որ նկարիչը լիներ: Արվեստը միշտ պետք է անկեղծ մնա: ...Արվեստը պետք է լինի լուրջ և ոչ թե՛ ծաղր ու կատակերգություն: Մարդը չի ծիծաղում այն բանի վրա, ինչը սիրում է: ...Արվեստը պետք է պահպանի կառուցվածքն ու պլաստիկությունը, հակառակ դեպքում այն կհավասարեցվի մի անգիտակցական խաղի, որը ամեն ոք կարող է խաղալ անկախ որակավորումից և որակից»⁶:

Գորկու վերոհիշյալ գործերը, ինչպես նաև 1947 թ. «Գութանը և երգը», «Նշանդրեքը», «Հոգեվարքը» և մյուսները, զգայական հիմք ունեն. դրանք կերտված են մանկական հիշողությունների և տպավորությունների վրա, որոնք աղոտ կերպով հառնում են անցյալի խորքից: Այս մասին Գորկին ինքը բազմիցս հիշատակում է քրոջն ուղղված նամակներում: Նա հիշում է հայրենիքի ծիրանների բույրը, հայկական հողաթափերը, հայկական խնոցին ու գութանը: «...ես նկարում եմ հայկական գութանները, որոնցով

⁴ Անդրե Բրետոն, Արշիլ Գորկի // Ա.գ.գ-ներգիր, 2005, 1 հոկտեմբերի, էջ 5:

⁵ H. Rosenberg, Arshile Gorky: the Man, the Time, the Idea, New York, 1962, p. 114.

⁶ Արշիլ Գորկի Աղոյան, Նամակներ, Երևան, 2005, էջ 154:

վարում էինք մեր տան մոտի Ադոյանների դաշտերը: ...Ձես կարող պատկերացնել ձեռքի այն հարստութիւնը, որ ունի հայկական գութանը. գութան, որ մեր նախնիները օգտագործել են աշխատանքի, ուրախութեան, դժվարութեան ու բանաստեղծականութեան հազարավոր տարիների ընթացքում: Գութանը պետք է լինի խորգոմցու գերեզմանաքարը: Ես զգում եմ մեր այգու ծիրանների տաք բույրը, և նրանք իմ մեջ արթնացնում են անցյալի հուշը: Իսկ երգերը, հայ ժողովրդի, մեր տառապած ժողովրդի հինավուրց երգերը: Ես սա եմ նկարում...»⁷:

Ինչպես նշում է էրիք դը Շասեյը. «...նրա (Գորկու - Մ. Մ.) դեպքում անդրադարձը հիշողութիւններին անկասկած շատ ավելի կարևոր է, քան իր ժամանակակիցների մեծամասնութեան համար»⁸: Հիշողութիւնները խառնվում են նկարչի գլխում, ալեկոծում նրա սիրտը, փոթորկում հոգին, ապա դուրս ժայթքում վերացական կերպերով: «Վերացական արվեստն օգնում է մարդուն ընկալելու տեսանելից այն կողմ ընկածը, անջատելու անսահմանը սահմանափակից»⁹: Իր այս գործերում Գորկին սահմանափակ արտահայտչամիջոցներով հասնում է ծայրահեղ էքսպրեսիվ սիսյի: Գույներն ու ձևերը միախառնվում են՝ վերածվելով երգի՝ կարոտի ու ցավի երգի:

Արշիլ Գորկին վերցրեց սյուրռեալիստական նկարչութեան տեխնիկան՝ մի կողմ դնելով գաղափարախոսութիւնը, որ խորթ էր իր մտածելակերպին ու աշխարհայացքին: Անցնելով ստեղծագործական փնտրտուքի երկար ճանապարհ, սնվելով տարբեր ոճական ուղղութիւններով՝ Գորկին ստեղծեց իր սեփական ինքնատիպ ոճը, թեկզբեց իր արվեստը՝ դառնալով ամերիկյան նոր արվեստի կերտողներից: «Ինչպես Սեզանը կանխատեսեց և ոգեշնչեց Պիկասոյի և Բրաքի կուբիզմը, այնպես էլ Գորկին նախանշեց անկախ և առաջադիմական ամերիկյան արվեստի դարաշրջանի գալուստը»¹⁰: «Նա նման էր սառցալեռի, որ ինը տասներորդ մասով ընկղմված էր օվկիանոսում, և երևում էր ընդամենը մեկ տասներորդը, բայց այն, ինչ երևում էր՝ հզոր էր ու հրաշալի իր փայլի մեջ», - ասում էր Վիլհելմ դե Բուենինգը: «Որպես Պրոմեթէոս նա գողացավ արատրակցիոնիզմի կրակը և հանձնեց ամերիկյան նկարչությանը»¹¹:

⁷ Նույն տեղում, էջ 116:

⁸ Hommage, Arshile Gorky, Paris, 2007, p. 22.

⁹ Արշիլ Գորկի Ադոյան, Նամակներ..., էջ 158:

¹⁰ Arshile Gorky 1904-1948, a Retrospective by Diane Waldman, New York, 1981, p. 13.

րիչների սերնդին»,- հայտարարում էր Բալքոմ Գրինը: «Գորկին իր տիեզերքն է կերտել և առաջինն էր, որ առաջ անցավ ստվերելով մեծ համբավ ունեցող նկարիչներին, նաև Փոլոքին», - խոստովանում էր Ալան Սթոունը¹¹:

Յավոք, Գորկուն ողջ կյանքում հետապնդեցին դժբախտությունները: Եղեռնը վերապրած, օտարության մեջ տառապող արվեստագետին վիճակված էին նոր փորձություններ: Նա ապրեց նաև նկարչի համար ամենածանր պահը. 1946-ին հրդեհվեց արվեստանոցը, այրվեցին նկարները: Ապա վիրահատությունն էր քաղցկեղի դեմ: 1948-ին ավտովթարի ժամանակ Գորկին կոտրեց պարանոցը, և անդամալույծ դարձավ նկարող ձեռքը: Հուլիսին հեռացավ կինը՝ իր հետ տանելով երկու դուստրերին: Այս ամենին դիմանալը վեր էր մարդկային ուժերից: Հուլիսի 26-ին Գորկին ինքնասպան եղավ:

Անդրե Բրետոնը Գորկու մահից հետո գրեց.

Ինչ բարձր ես դու

Օդում

Բայց ոչ այնքան որքան մեզ թողած քո ամեն ինչի մեջ

Եվ ոչ այնքան որքան անունը քո

Դրոշմված սրտիս փոթորիկներում¹²:

¹¹ Փակաբեթ, 2006, 14 հունվարի, էջ 5:

¹² Անդրե Բրետոն, Հրաժեշտ Արշիլ Գորկուն // Ազգ-ներդիր, 2005, 1 հոկտեմբերի, էջ 5:

Մկրտիչ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

ՄԿՐՏԻՉ ԶԱՆԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ

1919-ին, երբ Զանանը եկավ Փարիզ, թատերական կյանքն այստեղ յուրատեսակ ճզնաժամի մեջ էր: Առաջին աշխարհամարտից հետո հաղթանակած երկրում տիրում էր էյֆորիայի ու տագնապի խառնուրդը դարձած հակասական մի զգացում, որը «ծնունդ տվավ հուսալքման շրջանին», ինչպես հետագայում կընորոշի արտիստը¹: Այդ ժամանակ Կոմեդի Ֆրանսեզն անգամ ստիպված էր ինչ-որ չափով վերանայել իր դասական կողմնորոշումներն ու արձագանքել այն պահանջներին, որոնք հիմնականում թելադրում էր հասարակ ժողովուրդը: Իհարկե, թատրոնի ղեկավարութունը՝ էմիլ Ֆաբրի գլխավորությամբ (տնօրինել է 1918-1936) ամեն կերպ աշխատում էր պահպանել դարերի ընթացքում ձևավորված «Մոլիերի տան» օրինակելի վարկանիշն ու ավանդական խաղաոճը, որ այդ ժամանակ կբավարարեր թերևս միայն էլիտար վերնախավին, սակայն լայն հասարակության պահանջարկն արդեն ուրիշ էր, ուստի և թատերարվեստի առջև ծառայած խնդիրներն էլ բոլորովին այլ էին՝ ասպարեզ էր եկել նոր հանդիսական թատրոնի իր նոր ըմբռնումով և նոր հետաքրքրութուններով ու ճաշակով: Այդ կապակցությամբ Զանանը գրել է. «Ժողովուրդը, առանց ճիգի, քանդեր էր պարիսպները, ...խուժելով թատրոններեն ներս, ֆուռայներու մեջ սկսած էր վիճաբանիլ և առաջարկել յուր ճաշակը: «Նրբաբնազդ ընտրանին» սկսավ քիչ հաճախել թատրոն: Ինչ հեզանք, երբ նախապես թատրոնը հազիվ կկարողանար ծածկել իր ծախսերը, այժմ ոչ միայն սկսավ շահիլ, այլև թատրոններու թիվը ավելցավ ակնհայտ կերպով...»²: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանում առանձնակի թափ առավ մի կողմից՝ «բուլվարային թատրոնների» գործունեութունը, մյուս կողմից՝ «թատերական ավանգարդի» նորարարական շարժումը, որն իր հերթին նույնպես երկբևեռ էր. մի ծայրում սյուրռեալիզմի, ֆորմալ դպրոցի ներկայացուցիչներն

¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), N 41:

² Նույն տեղում:

էին (Անտոնեն Արտո), մյուսում՝ «Կարտել» կոչված խմբավորման (Ժակ Կոպո, Ժորժ Պիտոև և ուրիշներ): Իսկ նրանց կողքին իր ժողովրդական ուղղվածությամբ հատկապես առանձնանում էր Ֆիրմեն Ժեմիեն:

Վերջիններիս էլ հարել է երիտասարդ Ջանանն իր զեղազիտական կողմնորոշումներով: Սկզբում նա ընդունվել է Փարիզի Կոնսերվատորիա, ճանաչված դերասան, Կոմեդի Ֆրանսեզի սոսյետեր Պոլ Մունեի արվեստանոցը, որպես ազատ ունկնդիր: Մունեն, որ Մունե-Սյուլիի կրտսեր եղբայրն էր, իր ստեղծագործության մեջ պահպանել է ռոմանտիկական խաղաոճի տարրեր և միաժամանակ գտնվել է նատուրալիզմի ուժեղ ազդեցության տակ: Դասական խաղացանկում նա աչքի է ընկել սուր խարակտերային և խորը հոգեբանական խաղով, որի գագաթնակետը դարձավ Յագոն, իսկ հետագայում, երբ եղբայրն արդեն չկար (1916), նաև նրա լավագույն դերերից մեկը՝ էդիպ արքան, Սոֆոկլեսի համանուն ողբերգության մեջ³: Կոնսերվատորիայում ուսանելն էապես նպաստել է Ջանանի և՛ արտիստական նկարագրի, և՛ թատերական հայացքների ձևավորմանը: Նրա լավագույն դերակատարումներից մեկը տարիներ հետո դարձավ նույնպես Յագոն, բայց մինչ այդ նա անդադրում աշխատել է բացահայտել թատերական արվեստի գաղտնարաններն ու խորամուխ լինել պատմական և ժամանակակից մշակութային իրողությունների մեջ: «Մտել է Ալիանս Ֆրանսեզի Գրականության և արվեստի դասընթացները, հետևել է Սորբոնի դասախոսություններին, միաժամանակ անվերջ այցելել թատրոններն ու թանգարանները: Փարիզյան «փողոցները» նույնպես նրա համար դարձել են արվեստի ըմբռնողության խորունկ ազդակներ»⁴: Այնպես որ 1923-ին, երբ նա, իբրև արդեն ձևավորված արվեստագետ, հետագարձ հայացք կզցի այդ տարիների Ֆրանսիական թատերարվեստի վրա, կնկատի. «Բեմադրությունը (խոսքը բեմադրական արվեստի մասին է - Մ.Հ.) Անթուանեն հետո, որ Զոլայի իրապաշտությունը կիրարկեց բեմի վրա՝ ի հայտ բերավ Ֆիրմեն Ժեմիեն... մինչ ուրիշ արտիստներ, փայփայանքի հույսերով կմարզվեին, նա անցավ զրկանքների բովեն, ապրեցավ աշխատանքի շրջանին մեջ և դուրս եկավ կուռ և պարտադրող: Նա գործի մեջ փոխանորդեց Անտուանին, բաժնեց անոր

³ Sliu Театральная энциклопедия, т. 3, М., 1964, с. 1003.

⁴ ԳԱԹ, N 92:

աշխատանքը, հռչակվեցավ և ստեղծեց յուր ուղին, նոր ուղին Ֆրանսայի մեջ: Ժեմիեի եթե ոչ գաղափարներուն, բայց ուղղութ-
յանը հետևեցավ Կոպոն, տնօրենը «Վիյեո Կոլոմպիյե» (Vieux-
Colombier - Մ.Հ.) թատրոնին, որ ուժ տվավ նոր թատրոնի
արտիստական ըմբռնումին»⁵:

Ի՞նչ «ուղղության» և «նոր թատրոնի արտիստական
ըմբռնումի» մասին է խոսքը: Ինչպես հայտնի է, Անտուանի և
Լյուենիե-Պոյի ձեռքի տակ մեծացած ժեմիեն իր արվեստում փայ-
լուն ներդաշնակել է իրապաշտ ճշմարտությունն ու ռոման-
տիկական ոգևորությունը, ինչը ժամանակին նրան թույլ է տվել
համեմատելու 19-րդ դարի բուլվարային թատրոնների կուռքը
հանդիսացող Ֆրեդերիկ-Լեմետրի հետ, ուստի ժողովրդական ազ-
գային թատրոն (TNP) հիմնելու գաղափարից զատ, որն իրակա-
նացրեց 1920-ին, նա միաժամանակ ձգտել է հաստատել Ֆրանսի-
ական թատրոնում նորաճ գերասանական խաղ՝ «մարմնացումը
ժողովրդական պոեզիայի ձևերից եկող վեհության և թատերայ-
նության»⁶: Եթե մինչ այդ Ֆրանսիական թատրոնի դասական
դպրոցը, ի դեմ Կոմեդի Ֆրանսեզի, ապավինում էր խոսքի
պոեզիային (պատահական չէ, որ այն հաճախ անվանել են «խոսքի
թատրոն»), ապա ժեմիեն եկավ վերանայելու մինչ այդ կարծրա-
ցած բեմական բոլոր կանոնները և հաստատելու թատրոնում
խաղի, գործողության, մարդկային ոգու օրգանական դրսևորում-
ների պոեզիան: Այս առումով ժեմիեն և Կոպոն թատրոնին նա-
յում էին միևնույն հայեցակետից:

Անցյալ դարի 20-ական թվականների շեմին, բեմադրական
արվեստում մինչ այդ արդեն նկատելի դարձած սյուրռեալիս-
տական որոնումները մղվեցին ետին պլան, և առանձնակի աշխու-
տական որոնումները դեմոկրատացման շարժումը, ի հա-
ժություն ապրեց թատրոնների դեմոկրատացման շարժումը, ի հա-
կադրումն ոչ միայն ակադեմիական լճացումի, այլև ի հեճուկս այն
կոմերցիոն ոգու, որի կրողները հետևողականորեն աշխատում էին
իրենցով անել ամբողջ ասպարեզը: Այդ շարժման առաջին ջահա-
կիրներից մեկը դարձավ նաև Ժակ Կոպոն, կոչ անելով վերահաս-
տատելու թատրոնում այն գեղարվեստական արժեքները, որոնք
երբև «չափանիշ, հակաթույն կդառնան կեղծ ճաշակի և գեղագի-

⁵ Գ.Ա.Թ, N 41 (ընդգծումը մերն է - Մ.Հ.):

⁶ История западноевропейского театра. т. 7, М., 1985, с. 189.

տական աղտոտութեան դեմ»⁷:

Ահա այսպիսի մթնոլորտում էլ անց է կացրել Մկրտիչ Զանանն իր ուսումնասնութեան շրջանը: Այդ ընթացքում նա ամբարել է ոչ միայն տեսական գիտելիքների հարուստ պաշար, այլև հիմնավորապես յուրացրել «նոր թատրոնի արտիստական ըմբռնումներն» ու «ուղղութիւնները»: Նա փորձել է շահեկանորեն համադրել ավանդականն ու արդիականը, օգտվել թե՛ հին, և թե՛ նոր վարպետների դասերից: Ուստի «դերասանական դպրոց» ասվածը նրա համար միանգամայն հստակ և ճշգրիտ դիսցիպլին էր, որի նպատակը ոչ թե դերասան պատրաստելն էր, այլ դերասան կրթելը: Այդ կապակցութեամբ նա գրում է. «Դերասան դառնալը կարելի է սորվեցնել, արվեստի մեջ չկա սորվեցնել, և մենք ինչ ուղղութեան որ պիտի հետևինք, դեմ ենք ազոր, որովհետև մեր ուղղութիւնը հակառակ է ազոր: Մեր ուղղութիւնը, շքույն, մեզ կըսես. այո՛ դարբինին կարելի է սորվեցնել և որոշ ժամանակ հետո հասցնել զայն դարբինի վարպետ, բայց դերասանին չենք կարող, որովհետև երբ կսորվեցնենք, պետք է ավարտենք, և երբ որ ավարտենք կնշանակե արդեն պարտվեցանք և դատապարտվեցանք փշանալու: Ուրեմն ինչո՞վ է, որ մենք գեղարվեստական աշխատարաններու մեջ կարող ենք պարապել կամ պետք է պարապենք: Պատասխանելով այդ հարցին, կըսենք, թե մենք կարող ենք մշակել ձայնը, զորացնել թոքերը, մարզել ջղերը, տալ պրպտումներու միջոցներ և այլն»⁸: Ընդարձակ տեսութեան ձևով շարադրված նրա այս շարքի դիտարկումներում կարգում ենք. «Դերասանի սիրտը պիտի նման լինի սինեմայի ընդունարան գործիքի մը, որուն ժապավենը պետք է գրեթե անվերջ ըլլա, որպեսզի կարող ըլլա մարդկային ամեն տեսակի հույզեր և հուզումներ իր մեջ ստանալ: Ըսինք ամեն տեսակի, այժմ կարելի է հարց տալ. հապա ամբլուան, թատերական սե՞ռը, ինչպե՞ս կարելի է, որ ծիծաղի արտահայտութիւններու մեջ մարզված դերասանը ողբերգութիւն խաղա: Բայց մեր ուղղութիւնը կըսես ու կկրկնես. ամեն տեսակի հույզեր ու հուզումներ, որովհետև լավ դերասանին համար չկան սեռեր, անոր հոգին նման պետք է ըլլա վաճառատան, ուր կան ամեն տեսակի ապրանք, որը տրամադրելի է հասարակութեան»⁹: Այս

⁷ Է.Ա.Финкельштейн. Жак Копо. А., 1971, с. 30.

⁸ ԳԱԹ, N 54:

⁹ Նույն տեղում:

տեսությունը, որ սկիզբ է առնում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ուսման թատրոնի նորարարներից (Ստանիսլավսկի, Նեմիրովիչ-Պանչենկո), լայնորեն կիրարկում էին իրենց արվեստում և՛ ժեմիեն, և՛ Կոպոն, և՛ Պիտոևր: Իսկ ավելի վաղ գործնականում այն իրականացրել է Անտուանը, որի ազդեցությունն ակնառու դրսևորվել է նաև Ջանանի ուսուցչի՝ Պոլ Մուլենի արվեստում: Նրա այդ տեսական հայացքներին ծանոթ լինելով միայն կարելի է ամբողջական պատկերացում կազմել, թե գեղարվեստական ի՞նչ արժեք է բերել իր հետ Ջանան-արտիստը: Այսպես, խոսելով դերասանական արվեստի արտահայտչականությունից խնդիրների մասին, նա գրել է. «Հին ժամանակ ամենահայտնի դերասաններ, ինչպես Բին, Միս Սիտրես և առավելապես անոնց շրջանի նվազ տաղանդավոր դերասանները, ունեին որոնումի այլ ըմբռնում: Անոնց համար արտահայտել կարենալու պայմանը, ապրիլն էր այն վիճակը, որը պետք էր վերապրեին բեմի վրա, ուրեմն կարենալու համար հարբեցող մը ցույց տալ, անոնք պետք է անպայման գինետոններ էրթային, գինովնային, խաղամուրի հետ թղթախաղ խաղային և այլն: Ահավասիկ այս էր անոնց ուղղությունը: Բայց երբ վերլուծումի մը ենթարկենք այդ ուղղության հիմունքը, կտեսնենք, որ... եթե ոճրագործ մը ներկայացնել պիտի ըլլար, պիտի ստիպեինք ոճիր մը գործել, գայն կարենալ ներկայացնելու համար: Հյուսիսատավոր մը ներկայացնելու համար՝ թոքախտ ստանալ և այլն, և այլն, որոնք անկարելի էին: Հնարավոր ըլլալու պարագային անգամ, անոնք գուրկ պիտի ըլլային այն զգլխիչ հատկությունեն, որը արվեստին է վերապահված միայն, որովհետև այդպիսով անոնք պիտի ստեղծեին պարզապես արհեստ մը: Ընդհակառակը մեր ուղղությունը կըսես, կըքերը մաքրորեն արտահայտելու համար, դուք պետք է գերծ ըլլաք անոնցմե. սրահը լցված ուկնդիրներով, պետք է հավատք ունենա ձեր հոգիի մաքրություն, որպեսզի հաղորդակցվի հոն ինկլինյոզ յուրաքանչ-յուր լույսի ճառագայթեն, որոնք հուզումներն իսկ են»¹⁰: Ինչպես տեսնում ենք, այստեղ որոշակի աղերս կա Դիդրոյի տեսության հետ, որ, կարծում ենք, նույնպես ժամանակաշրջանի նորագույն միտումներին նրա համախոհ լինելու արդյունքն է: Հայտնի է, որ թատրոնի վերաբերյալ, գրեթե նույն ժամանակաշրջանում, գրեթե

¹⁰ ԳԱԹ, N 54 (ընդգծումը մերն է - Մ.Հ.):

նույն Հայացքների ջատագովն է եղել նաև Սոմերսեթ Մոեմը¹¹: Ընդհանուր առմամբ Ջանանի այս ստեղծագործությունն առանձին ուսումնասիրության նյութ է, իբրև դասագրքային ձեռնարկ՝ նախատեսված սկսնակ դերասաններին մասնագիտորեն կրթելու համար: Պարզ է, որ միայն իր գործը կատարելապես իմացող արտիստը կարող էր գրել այն և վերջում իրավունք վերապահել խորհուրդ տալու. «Ես Ձեզ կըսեմ երկու կարևոր բան, որ միշտ պետք է ի նկատ ունենալ: Թատրոնը ինչքան որ կյանքի հայելին է, այնուհամեմայնիվ նա քիչ մը գեղեցիկ ցույց տվող հայելի պետք է ըլլա: Իսկ ամենակատարյալ դերասանին հաջողությունը պետք է կայանա երեք վայրկյանին մեջ. եթե ան կարողացավ ժողովուրդը հուզել և առինքնել երեք վայրկյան, նա արդեն հաջողեցավ: Ով որ շատ երեք վայրկյաններ ունի բեմի վրա, նա է ամենամեծ դերասանը»¹²:

Այս տողերը գրվել են, երբ Ջանանն արդեն Երևանի 1-ին Պետական թատրոնի դերասան էր և հասցրել էր իր տաղանդի հմայքով տպավորություն գործել խորհրդային հանդիսականի վրա: Սարգիս Մելիքսեթյանը, որ այստեղ առաջին իսկ օրվանից ականատեսն էր նրա ստեղծագործական վերելքի, գրում է. «Էսթետիկական զգացումը խիստ զարգացած էր... շատ հետաքրքրական ու յուրօրինակ արվեստագետ Մկրտիչ Ջանանի մեջ: Այդպիսին էր նա ոչ միայն բեմում, այլև կյանքում: ...Նա գրական, գեղարվեստական և այլ կարգի խոշոր երևույթներն ընկալում էր այնպիսի բավականություն, որ կարծես լայն գավաթով և երկու ձեռքով, հանդիսավորապես քաղցրահամ գինի վայելելիս լիներ: Հոգեկան ուժի այդօրինակ հորդումով էր նաև ընդունում բեմական լավագույն երկը, կերպարը, միտքը, խոսքը և թատերասրահին մատուցում տոնահանդեսի տրամադրություն: Խոսքս չի վերաբերում ձևին, մաներին, ո՞չ, խոսքս արտիստի ներքին վիճակի, ներքին ապրումների ու լիցքի, գուցե ավելի ճիշտ կլիներ ասել՝ ստեղծագործական խանդավառության մասին է»:

Կարծում ենք, այս բնութագրման մեջ իրապես արտահայտված են այն հիմնական գծերը, որոնք հատկանշական էին Ջանանի արտիստական նկարագրին: Դրանց գերակշռող մասն ավելի հարս-

¹¹ История западноевропейского театра, с. 219.

¹² ԳԱԹ, N 54:

տացավ և կատարելագործվեց նրա արտասահմանում եղած ուսում-
նառուլթյան շրջանում, երբ իր ազգային արմատներին անդավա-
ճան երիտասարդ արվեստագետի հոգեկերտվածքի ձևավորման մեջ
իր բարերար դերն ունեցավ նաև Փրանսիական միջավայրի ազդե-
ցությունը:

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԸ

«Կոմիտասը մի մեծություն էր, որ լուսատու գիտավորի նման մեր մշակույթի երկնակամարով անցավ, բայց թողեց լուսավոր մի հետք, որը երբեք չի ջնջվելու»:

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

Ներկա զեկուցման մեջ ուզում ենք անդրադառնալ Հայ մշակույթի երկու մեծանուն, տաղանդավոր արվեստագետներին՝ Փանոս Թերլեմեզյանին և Կոմիտասին, պատմել նրանց ջերմ փոխհարաբերությունների, ընկերություն մասին, խոսել հանճարեղ կոմպոզիտորի հանդեպ Թերլեմեզյանի տաժաժ անկեղծ հիացական վերաբերմունքի մասին:

Ուսումնասիրություն համար նյութ են ծառայել Հայաստանի ազգային պատկերասրահի արխիվային ֆոնդերը, մասնավորապես նկարչի 300 էջ ծավալով մեքենագիր հուշերի «Կոմիտասի հետ» գլուխը:

Թերլեմեզյանը պատմում է, որ իրենք բարեկամացան, ավելի մտերմացան Կոմիտասի հետ, երբ նա փոխադրվեց Բանկալտի և վերջինիս հետ բնակվեցին մի տան մեջ, որն ամբողջովին նրանց երկուսին էր պատկանում: Կոմիտասի աշխատասենյակը գտնվում էր տան վերին հարկում. այդտեղ էին տեղավորված նրա դաշնամուրն ու ֆիզհարմոնը:

Կոմիտասին և Թերլեմեզյանին կապում էր բազմամյա ընկերությունը: Նրանք միասին եղել են կաթողիկոսների ամառանոց Բյուրականում, այնտեղ նրանց է միացել տաղանդավոր արվեստագետ Եղիշե Թադևոսյանը:

Թերլեմեզյանը պատմում է, որ Կոմիտասի հետ միասին եղել են նաև եզդիների ցեղապետանիստ Ասլանլու գյուղում¹: Ցեղապետը Կոմիտասի ճեմարանական ընկերներից էր: Հարմար առիթը բաց չթողնելով, բնություն գրկում, աղբյուրի մոտ Թերլեմեզյանը նկարում է Կոմիտասին և ցեղապետին միասին: Նկարչի հա-

¹ Տե՛ս Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 186-187:

վաստմամբ, այդ նկարը վաճառվել է Պոլսի ցուցահանդեսներից մեկում:

Տարիներ անց սուլթանների մայրաքաղաքում Թերլեմեզյանը և Կոմիտասը նորից ընկերացան, ապրելով մի տան մեջ, սնվելով միևնույն սեղանից: Եվ այդ տունը շուտով զանազան ազգության անհատների համար մշակույթի օջախ դարձավ: Հույն գիտնականներ կային, ովքեր գալիս էին Կոմիտասի հետ խորհրդակցելու եկեղեցական խաղերի ծագման շուրջ: Թուրքեր կային, որոնք գալիս էին խոսելու, զրուցելու Պոլսում երաժշտանոց և օպերա ստեղծելու մասին:

Թերլեմեզյանը մեծ հպարտությամբ է պատմում, որ Կոմիտասը կազմեց երեք հարյուր մարդուց բաղկացած երկսեռ երգեցիկ խումբ²: Կարևոր է նշել, որ խմբում կային այնպիսի անդամներ, որոնց անձանոթ էր երաժշտական այբուբենը: Կոմիտասն իր զվարթ բնավորությամբ աշակերտների մեջ սեր արթնացրեց դեպի հուզական երաժշտությունը և նրանց հոգիները համակեց ազնվացնող արվեստով³: Մեծ նկարիչը հավաստում է, որ համարձակորեն կարելի է ասել, որ մինչ այդ ժամանակ երգված գոեհիկ և անարվեստ երգերը գործածությունից դուրս եկան: Անշուշտ, դա իրիխարի հաջողությունն էր հայ մշակույթի զարգացման տեսակետից:

Թերլեմեզյանը մեծ հպարտությամբ է հիշում, որ օսմանյան հանրային գործոց նախարարի տեղակալ, ազգությամբ ֆրանսիացի Պ. Հյուլմբերը, որը հաճախ էր այցի գալիս իրենց, «Բելեր, ցուրեր» երգելով էր աստիճանները բարձրանում⁴: Կոմիտասի սենյակում հաճախ կարելի էր հանդիպել նույնիսկ իտալացի փորձառու դաշնակահարների, ովքեր գալիս էին ունկնդրելու փորձերը:

Մեծ նկարիչն առանձնակի ջերմությամբ է պատմում Կոմիտաս-անհատի մասին: Կոմիտասը չափազանց ուրախ և շատ աշխատաս-

² Խոսքը «Գուսան» երգչախմբի մասին է, որի անդրանիկ համերգը տեղի ունեցավ 1910-ի նոյեմբերի 21-ին Կ. Պոլսի Պոլի Շանի ձմեռային թատրոնում (մասնավորապես տե՛ս Ռ. Մաղմանյան, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, 2006, էջ 187, Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բնյուն գրչէն, Մոնթրեալ, 1994, էջ 25):

³ Խոսքը Կոմիտասի հինգ սաների՝ Բարսեղ Կանաչյանի, Վաղարշակ Սրվանձուտյանի, Վարդան Սարգսյանի, Միհրան Թումաճանի և Հայկ Սեմերճյանի մասին է, ովքեր հետագայում շարունակեցին իրենց Ուսուցչի գործը:

⁴ Տե՛ս Ե. Մարտիկյան, Փանոս Թերլեմեզյան, Երևան, 1964, էջ 39:

տասեր մարդ էր: Նրա բնավորութիւնը միալար չէր, նա խիստ դյուրագրգիռ էր, երբեմն էլ՝ բարկացող: Սակայն նրա բարկութիւնը նման էր քամիներից քշվող ամպի ծվենների, բայց այդ ծվենների արագորեն անցնելուց հետո նորից արև, նորից զվարթութիւն և նորից ծիծաղ էր տիրում:

Այս ամենից բացի Կոմիտասի այսչափ զգայուն հոգին տառապում էր ուրիշների վշտերով:

Թերլեմեզյանը անհրաժեշտ է համարում հիշատակել իր և Կոմիտասի հետ կապված ևս մեկ դեպք:

Մի անգամ իրենց այցելութեան է գալիս կայսեր արարողապետը՝ Իսմայել Զենանի բեյը, որը մեծ նկարչի աշխատանքներին ծանոթանալու համար թուլյատվութիւն է խնդրում⁵: Նկարչի հետ բարձրանում են աշխատասենյակ, ուր նա ամենայն ուշադրութեամբ դիտում է նկարները: Իջնելիս, երբ Կոմիտասի սենյակի մոտով էին անցնում, Թերլեմեզյանը հարցնում է, թե չէ՞ր բարեհաճի արդյոք Կոմիտաս էֆենդիի հետ ծանոթանալ: Արարողապետը պատասխանում է, որ շատ կուզեր: Ներս մտնելուն պես նրանք ծանոթանում են, և արարողապետը նախկին ուշադրութեամբ դիտում է այդ սենյակում կախված նկարները ևս: Վերջինիս խնդրանքով Կոմիտասը մոտենում է դաշնամուրին և, ինքն իրեն նվագակցելով, երգում Շուբերտի ստեղծագործութիւններից մեկը՝ գերմաներեն լեզվով, այնքան խորունկ զգացումով, որ սենյակում գտնվողները քարանում են: Եվ նույնիսկ երգը վերջացնելուց հետո էլ բավական ժամանակ սենյակում լուռութիւն է տիրում:

Թուրքիո ղիվանագետը՝ չկարողանալով զսպել իրեն, ձեռքը սեղանին է խփում և ասում. «Ութ հարյուր տարվա պետութիւն ենք և այսպիսի մի արվեստագետ չունեցանք»:

Արարողապետը հեռանում է մեծ տպավորութիւններով: Դիվանագետի մեկնելուց հետո Թերլեմեզյանը շնորհավորում է Կոմիտասին այդ փայլուն հաղթանակի համար:

Կոմիտասի աննման համերգները և բովանդակալից դասախոսութիւնները ոչ միայն ուրախացնում էին Պոլսի առաջադեմ հասարակութեանը, այլ նաև ոգևորում:

Այդ օտար գաղթավայրում եղած մտավորականութեան ազ-

⁵ Այս պատմութեան համառոտ շարադրանքը տե՛ս Ե. Մարտիկյան, Նշվ. աշխ., էջ 40:

նիվ, հայրենասեր մասը սկսեց փառավորվել և պարծենալ, որ ինքը հայ է: Սկսեց գիտակցել, որ մեր դարավոր մշակույթից մի սաղմ-նային ժառանգութիւն ունի իր մեջ, որի ստեղծագործական միտքն ու զգայունութիւնն է կերտել նման նուրբ և հուզիչ երաժշտութիւն:

Ինչքան գիտակցութիւնը խորանում էր, այնքան ավելանում էր զարմանքն այն փաստի հանդեպ, որ այդ սքանչելի երաժշտութիւնը ստեղծել են անգիր, անգրագետ, հասարակ գեղ-ջուկները:

Իսկ մեծատաղանդ կոմպոզիտոր Կոմիտասն իր գիտակցութեան և խոր զգայունութեան շնորհիվ այդ տաղերը նրբորեն ներգաշնակում և մատչելի էր դարձնում հասարակութեանը:

Շատ հաճախ նա «հում նյութից»՝ ինչպես, օրինակ, շղթաների ձայներից, ջրերի անկումից, ոտքերի դոփշուններից ստեղծում էր մոտմոտալ երաժշտական ստեղծագործութիւններ:

Փ. Թերլեմեզյանը ցավով է փաստում, որ հոգևորականութեան մեծ մասը չէր հանդուրժում, որ մեկ ուրիշը բարձրացնի ժողովրդի մշակութային մակարդակը: Ամեն օր զրպարտում էին Կոմիտասին, թե նա «եկեղեցու սեղանը փոխելով թատրոնների բեմերի հետ անպատվութիւն է բերում, թե նա պղծում է կրօնական սքեմը» և այլն:

Եվ ժամանակի հայտնի գրագրուհի Արշակուհի Թեոդիկը⁶ շուտով գնահատանքի հոգևածներ է գրում ի նպաստ, ի պաշտպանութիւն Կոմիտասի:

Եվրոպական, ինչպես նաև արաբական թերթերը նույնպես գովասանքի խոսքեր էին շռայլում հայ երաժշտութեան վերաբերյալ: Այդ օրերին հայ սքանչելի երաժշտութիւնն ունկնդրելու էին գալիս գրեթե բոլոր ղեկավարները: Կայանում էին բազմաթիվ համերգներ, որտեղ փայլում էր Կոմիտասն իր հոգեթով և աննման երաժշտութեամբ:

1912-ի ամռանը Թերլեմեզյանը Կոմիտասի հետ ուղևորվում

⁶ Թեոդիկ (ձեզվեճյան) Արշակուհի (1875, Կ. Պոլիս - 1922, Լոզան) - գրող, հրատարակիչ, հասարակական գործիչ: Թեոդիկի կինը: 1907-ից աշխատակցել է ամուսնու և իր հիմնած «Ամենուն տարեցոյց» տարեգրքին: Եղել է Կ. Պոլսի Ազգամբեր հայուհայաց ընկերութեան (1879-1915) գործիչներից: Հիմնել է Կ. Պոլսի Տիկնանց միութիւնը:

են մեծն կոմպոզիտորի ծննդավայրը՝ Քյոթահիա⁷: Որոշ ժամանակ Քյոթահիայի մերձակայքում շրջելուց հետո տեղի երիտասարդ ուսուցիչ Երեմյանի հետ ուղևորվում են դեպի քաղաքից բավա-կանին հեռու գտնվող հանքային ջրերը: Այստեղ հայ և թուրք հասարակութունն ապրում էր վրանների տակ:

Թերլեմեզյանը հիշում է, որ Կոմիտասի հետ իրենք էլ վրան են խփում բլրի ծայրին գտնվող անտառում և մեկուկես ամիս ապրում այդտեղ:

Եվ հրաշագեղ բնության գրկում մեծ նկարիչը ստեղծում է իր լավագույն աշխատանքներից մեկը՝ «Կոմիտաս», 1913:

Ամեն անգամ այս աշխատանքը դիտելիս մեզ զարմացնում, ինչպես նաև հիացնում է նկարչի կատարողական վարպետութունը:

Ինչպես իր մյուս բոլոր աշխատանքներում, այստեղ ևս Թերլեմեզյանը հավատարիմ է մնացել ռեալիստական գեղանկարչության ավանդներին:

Կոմիտասի կերպարն աչքի է ընկնում իր հասարակությամբ, ավելի ճիշտ՝ պարզությամբ, որն աշխատանքին լրացուցիչ գրավ-չութուն է հաղորդում:

Կոմիտասի կերպարը դիտողին զբաղում է իր անմիջակա-նությամբ: Աշխատանքը գուտ դիմանկարչական չէ, Թերլե-մեզյանն այստեղ ներմուծել է և՛ կենցաղային, և՛ ազգային էլե-մենտներ, առարկաներ՝ ետին պլանում գտնվող վրանը, նրբագեղ սափորը, քամանչան և գունային առումով կերպարին յուրահա-տուկ ակտիվութուն հաղորդող հայկական ազգային գորգը: Վերջիններս կարծես լրացնում, արտահայտիչ են դարձնում մեծ երաժշտագետի հեզ՝ հանդարտությամբ ու հանգստությամբ լի կերպարը:

Աշխատանքի առավելութունների, ինչպես նաև արտա-հայտչամիջոցների մասին խոսելիս պետք է անպայման նշենք, որ ստեղծագործության անբաժանելի և կարևոր՝ մասն է լու-սաստվերը:

Եթե ուշադիր դիտենք նկարը, ապա միանգամից կնկատենք,

⁷ Թերլեմեզյանը չի կոնկրետացնում, բայց դա տեղի է ունեցել օգոստոսի սկզբ-բին, երբ նրանք հանգստանալու նպատակով ուղևորվել են Քյոթահիա: Կուտի-նայում էլ հենց Թերլեմեզյանը նկարում է Կոմիտաս վարդապետին՝ ծառի տակ նստած, ընթերցանության պահին (տե՛ս Գրական նշխարք..., էջ 27):

որ այստեղ բավականին ցայտուն է լուսաստվերային խաղը: Մեծ նկարչի կատարողական վարպետությունը զգացվում է նաև արևի լույսի և ստվերի հիանալի պատկերման մեջ:

Նկարում լուսաստվերային խաղն իր անցումներով, հակադրություններով ամենուր է:

Կտավի յուրահատկություններից, առավելություններից մեկն էլ առանձնահատուկ անդորրն է, որը տիրում է այս աշխատանքում:

Կարծես ինչ-որ հոգի շոյող, յուրօրինակ հանգստություն կա թե՛ կոմպոզիտորի և թե՛ գեղատեսիլ բնության մեջ:

Հանգստություն և լուսություն է տիրում...

Ինքը՝ Թերլեմեզյանը նշում է, որ ինչքան արվեստագետի համար հաճելի է հրճվել բնության գեղեցկություններով և մի պահ վերանալ, կտրվել պրոզայիկ կյանքից, նույնքան նա մխիթարվում է «արվեստի ընկերներով»:

Այդտեղ նույն տարում կատարված աշխատանքներից են ԱՄՆ-ում մի կոլեկցիոների մոտ գտնվող «Զույգ այծեր» կոչվող փոքր նկարը, ինչպես նաև «Գյուղատնտեսի դիմանկարը»:

Թերլեմեզյանը վերհիշում է, որ Կոմիտասի հետ հանքային ջրերից վերադարձան Քյոթահիա: Մեծ երաժշտագետն անմիջապես մեկնեց Պոլիս, իսկ նա մի որոշ ժամանակ էլ մնաց Քյոթահիայում, որտեղ և ստեղծվեց «Գորգազորձ կինը» աշխատանքը: Վերջինս վաճառվել է Պոլսի ցուցահանդեսներից մեկում:

Եվ արդեն աշնանը Թերլեմեզյանը նույնպես շտապում է Պոլիս՝ իր աշակերտներին ընդունելու և արվեստի սիրով հրճվող հասարակությանն ընկերակցելու համար:

Սրանով եզրափակվում է Թերլեմեզյանի հուշագրության «Կոմիտասի հետ» գլուխը:

* * *

Սակայն Թերլեմեզյանի և Կոմիտասի բարեկամությունն այսքանով չի ավարտվել: Նրանք հետագայում ևս շարունակել են պահպանել իրենց ջերմ ընկերական հարաբերությունները:

1921-ին Կոմիտասին տեղափոխում են Վիլ-ժյուլիֆի հիվանդանոց: Մարտին Թերլեմեզյանն այցելում է հիվանդ Կոմի-

տասին⁸:

«...Խօսեցի իր աշակերտներու մասին, ուրախացաւ, որ եկել են Փարիզ սովորելու:

-Հարցրի՝ Հա՞յ երաժշտութիւնն է լաւ թէ եւրոպականը:

-Եղբայր (բարկացած), դու ուզում ես ծիրանից դեղձի Հա՞մ առնել, նա իր տեղն ունի, միւսը՝ իր:

-Հարցրի. կ'երգե՞ս:

-Այո, ասաց:

-Դէ՛, Կոմիտաս ջան, մի բան երգիր ինձ Համար:

-Ձէ, հիմա ես ինձ Համար եմ երգում եւ այն էլ շատ կամաց:

Մի կէս ժամ էլ դէսից-դենից խօսելուց յետոյ յանկարծ խռովեց, դուռը բաց արաւ եւ գնաց երեսը կպցրեց պատուհանի ապակուն ու էլ չխօսեց»⁹:

Հանդիպման ավարտին Թերլեմեզյանն ասում է. «Կոմիտաս, դու չափազանց վշտացած ես մարդկանցից, իրավունք ունես, սակայն չի կարելի Հավիտենապես խռովել: Մենք բոլորս անհամբեր քեզ ենք սպասում»...

⁸ Վերջին անգամ Թերլեմեզյանն այցելել է Կոմիտասին 1928-ին:

⁹ Գրական նշխարք..., էջ 33:

ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ ՎԱՍԻԼԻ ՊՈԼԵՆՈՎԻ
ՄԱՍԻՆ. ԱՇԱԿԵՐՏԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՁԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XIX-XX դդ. հայ և ռուս մշակութային գործիչների միջև հաստատված բազում կապերի մեջ առանձնակի տեղ է զբաղում Եղիշե Թադևոսյանի և Վասիլի Պոլենովի բարեկամությունը, որն սկսվելով դեռևս ռուսանողական տարիների համակրանքից՝ հետագայում վերաճում է ջերմ մտերմություն և ամուր ընկերություն: Ներկա գեկույցի նյութը քաղված է Հայաստանի ազգային պատկերասրահի հուշածեռագրային բաժնում պահվող Պոլենովի մասին Թադևոսյանի ձեռագիր հուշերից¹:

Վաղարչապատում ծնունդ առած, ստեղծագործական կյանքի մեծ մասը Թիֆլիսում ապրած Ե. Թադևոսյանի ինքնուրույն դեմքը ձևավորվել է Ռուսաստանում XIX-XX դդ. սահմանագլխի արվեստում տիրող բեկումնային շրջանում:

Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում Վ. Ե. Մակովսկուն, Ն. Վ. Նևրևին, Վ. Դ. Պոլենովին աշակերտած, ժամանակի առաջատար գաղափարներին դավանած, գեղանկարչական տարբեր դպրոցներին ու ուղղություններին, համաշխարհային կերպարվեստի գլուխգործոցներին քաջ ծանոթ նկարիչը ստեղծագործական ուղու դեռևս առաջին տարիներից իր հստակ տեղն ու ճանաչումն է ձեռք բերել ոչ միայն հայ կերպարվեստում, այլև ռուս համախոհ-նկարիչների շրջանում: Ուսանողական տարիներին Վասիլի Պոլենովից բացի երիտասարդ նկարիչը մտերմացել է մի շարք ռուս արվեստագետների Ի. Ի. Լևիտանի, Մ. Ա. Վրուբելի, Կ. Ա. Կորովինի, Վ. Է. Բորիսով-Մուսատովի, Ա. Յա. Գոլովինի, Ն. Վ. Դոսեկինի հետ: Այդ տարիներին Թադևոսյանը հատկապես բարեկամացել է Վ. Պոլենովի քրոջ նկարչուհի Ելենա Դմիտրիևնա Պոլենովայի

